


Հ. ՓԱՆՈՍՅԱՆ

ՆԻՏՐԱԳԻՆԻ ԴԵՐԸ

ԹԻԹԵՌՆԱԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ



ԳՐԱԴԱՐԱՆ

1938

ՃԵՐԱԳԱԿԱՆ

04 AUG 2010

631
o-20 my

Հ. ՓԱՆՈՍՅԱՆ

ՆԻՏՐԱԳԻՆԻ ԴԵՐԸ

ԹԻԹԵՌՆԱԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐ-
ՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

բաժ.
35

21.03.2014

ԹԻԹԵՌՆԱԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ
ԱՆՀՐԱԺԵՏՏՈՒԹՅՈՒՆԸ

Ընկ. ՍՏԱԼԻՆԸ գեռ 1934 թ. կուսակցության 17-րդ
համագումարում տված հաշվետու գեկուցման մեջ խո-
սելով մեր յերկրի անասնապահության վիճակի մա-
սին՝ մեր վողջ հասարակայնության ուշադրությունը
բեվեռեց անասնապահության հետագա աճման և զար-
գացման վրա։ Ընկեր ՍՏԱԼԻՆԸ մեր առաջ դրեց մի
շարք հիմնական խնդիրներ, ըստ վորում նշեց, վոր
անասնապահության գործը պետք է իրենց ձեռքն
առնեն վողջ կուսակցությունը, մեր բոլոր աշխա-
տողները՝ կուսակցականները և անկուսակցականները,
նկատի ունենալով, վոր անասնապահության պրոբլեմների նույնպիսի առաջնահերթ պրոբլեմ և, վորպիսին
եր յերեկ՝ արգեն հաջողությամբ լուծված հացահատի-
կի պրոբլեմը»։

Անասնապահության հետագա բարգավաճման ու
նրա քանակական և վորակական ցուցանիշներն ավել-
ի և բարձրացնելու համար՝ մի շարք միջոցառում-
ների կողքին խոշոր նշանակություն ունի նաև կերի
բազայի ապահովման խնդիրը։ Այդ տեսակետից անաս-
նապահական շրջաններում հյութալի ու սննդարար
կերաբույսերի մշակությունը լավագույն հիմքերի վրա
գնելը և վերջիններիս բերքատվության բարձրացման



1257
38

համար անհրաժեշտ ագրոնունարկումների կանոնավոր
կերառումը խոշոր և վճռական նշանակություն ունի:

Անասնապահական շրջաններում թիթեռնածաղկա-
վոր կերաբույսերը մեծ և պատվավոր տեղ են դրա-
վում: Որինակ՝ վիկան, կորնգանը, առվույտը, քրոշ-
նան, յերեքնուկը և այլն: Այս թիթեռնածաղկավոր
բույսերը մեծ քանակությամբ սպիտակուցային և
ճարպային նյութեր են պարունակում: Նրանց հատիկ-
ները հարուստ են ճարպերով և սպիտակուցներով, իսկ
այդ նյութերն անասունների համար անհրաժեշտ անըն-
դանյութ են հանդիսանում: Հողի բերքատվությունը
բարձրացնելու տեսակետից թիթեռնածաղկավոր բույ-
սերի մշակությունը բավականին մեծ տեղ է բռնում
ցանքաշրջանառության մեջ, նրանք հողը հարստաց-
նում են որգանական նյութերով, բարելավում են հո-
ղի ֆիզիկական վիճակը, ստեղծում են լավագույն
ստրուկտուրա, և դրանով իսկ կարգավորում են հողի
ծակոտիկնությունը՝ աերացիան ու հողի մեջ շատաց-
նում են ազոտային սննդանյութերի պաշարը:

Թիթեռնածաղկավոր բույսերի հիշյալ հատկու-
թյունները մարդկանց շատ վաղուց են հայտնի յեղել,
ուստի և նրանց մեծ տեղ ե տրվել բույսերի մշակու-
թյան մեջ:

Մեզ մոտ լինային, նախալեռնային և գաշտավա-
րական շրջաններում ամենուրեք մշակվում են թի-
թեռնածաղկավոր բույսեր, միայն այն տարբերու-
թյամբ, վոր տարբեր հողային և կլիմայական պայ-
մաններում մշակվում են տարբեր տեսակի թիթեռնա-
ծաղկավոր բույսեր:

Թիթեռնածաղկավոր բույսերն ունեն նույն մի այլ

կարևոր հատկություն այն ե՝ պայքարում են մոլա-
խոտերի դեմ:

1-2 տարի մի դաշտում մնալուց հետո, չորրինիվ ի-
րենց ուժեղ արմատների և ցողունային ու տերևային
խտության, նրանք զրկում են մոլախոտերին սնվելու
և աճելու հնարավորությունից, վորի հետևանքով 1-2
տարուց դաշտում մոլախոտ չի մնում:

Ահա թե ինչու թիթեռնածաղկավոր բույսերի մշա-
կությունը թե անասնապահության և թե յերկրագոր-
ծության մեջ կարևոր նշանակություն ունի:

Թիթեռնածաղկավոր ԲՈՒՑՍԵՐԻ ՍՆՆԴԱՆՑՈՒԹԵՐԸ

Բազմաթիվ փորձեր ցույց են տվել, վոր բույսերի
համար վորպես սննդանյութ ծառայում են մի շարք
քիմիական ելեմենտներ, որինակ՝ ածխածին, թթվա-
ծին, ջրածին, ազոտ, ֆոսֆոր, ծծումբ, կալիում, կալ-
ցիում, յերկաթ, մագնիզիում, մանգան և ուրիշներ:

Բույսերն իրենց սննդառության ընթացքում այդ
սննդանյութերը կանաչ տերևների ու արմատների մի-
ջոցով տարբեր ձևերով ու տարբեր յեղանակներով ըս-
տանում են բնությունից:

Հողի մեջ բացի ազոտից, ֆոսֆորից և կալիումից
վորոշ հողերում ել կալցիումից, մնացած ելեմենտնե-
րը համարյա բավարար քանակությամբ են գտնվում
և բույսերն այդ ելեմենտների կարիքը համարյա չեն
զգում:

Բայց բույսերն այդ ելեմենտների բոլոր միացու-
թյուններից չե վոր կարող են ոգտվել. նրանք սնվում
են միայն այն միացություններից, վորոնք ջրի կամ
թույլ թթուների մեջ լուծվում են:

Բույսերն իրենց մննդակության ժամանակ հաճախ են տուժում ազոտի, փոսփորի և կալիումի բացակայության պատճառով: Դրա համար ել հաճախ հողերը պարարտացնում են ազոտային, փոսփորային և կալիումի պարարտանյութերով, իսկ կալցիումով աղքատ հողերն ել պարարտացնում են կալցիումի պարարտանյութերով:

Թիթեռնածաղկավոր բույսերը համեմատած մնացած վոչ թիթեռնածաղկավոր բույսերի հետ, դեպի ազոտը յուրահատուկ վերաբերմունք ունեն: Նրանք կարող են ազոտով աղքատ հողերում աճել, զարգանալ և լավ բերք տալ: Դրանք լավ բերք տալու հետ մեկտեղ կարողանում են նաև այդ հողը ազոտային նյութերով հարըստացնել:

ՇՆՈՐՀԻՎ. Ի՞՞ՉՔԻ ՅԵ, ՎՈՐ ԹԻԹԵՌՆԱԾԱՂԿԱՎՈՐ
ԲՈՒՅՍԵՐԸ ՀՈՂԸ ՀԱՐՄԱՑՆՈՒՄ ԵՆ ՍԶՈՏԱՅԻՆ
ՆՅՈՒԹԵՐՈՎ.

Թիթեռնածաղկավոր բույսերից գյուղատնտեսության մեջ վորպես մշակովի բույսեր հայտնի յեն առվույտը, կորնդանը. վիկան, յերեքնուկը, լորին, սիսեռը, սոյան, վոսսը, վոլորը, մաշը, քրուշնան, լյուպինը, սերադիլան, դամբալան և այլն: Այդ բոլոր տեսակի բույսերն այս կամ այն չափով ավելացնում են հողի ազոտային սննդանյութերը:

Առաջին անգամ 1838 թվին Ֆրանսիայի գիտնական Բուսենդոն, վորոշ փորձեր կատարելուց հետո, յենթաղբեց, վոր թիթեռնածաղկավոր բույսերն ի տարբերություն մնացած բույսերի կարողանում են ողի ամոնիակը (ազոտային միացությունը) իրենց կանաչ

տերևների միջոցով ասիմիլյացիայի յենթարկել, այնպես, ինչպես տեղի յեւ ունենում ածխաթթվի յուրացումը: Բայց եւտաղայում ուսումնասիրությունները պարզեցին, վոր Բուսենդոյի այդ յենթաղբությունը սխալ ե: Ճիշտ ե, վոր թիթեռնածաղկավոր բույսերն ողի ազոտով մնվում են, բայց վոչ թե կանաչ տերևների միջոցով, այլ մի ուրիշ ճանապարհով, վորը գեռայն ժամանակներում հայտնի չեր:

1881 թվին գերմանացի պրակտիկ գյուղատնտեսություն-լյուպիցը միևնույն հողամասում 1 տարի շաբունակ մշակեց հացահատիկ՝ տալով միևնույն քանակի կայինիտ (կալիումական պարարտանյութ): Վերջին տարին նա այդ հողամասի մի մասի վրա ցանեց լյուպին (թիթեռնածաղկավոր բույս), իսկ մյուս մասի վրա՝ հացահատիկ: Եերքը քաղելուց հետո, յերբ այդ յերկու բույսերի մեջ վորոշեց ազոտային նյութերի քանակը, տեսավ, վոր լյուպինի մեջ ազոտային նյութերն ավելի շատ են, քան հացահատիկի մեջ: Այս յերմույթը նրա համար անհասկանալի յեր: Այդ ինչպես եր, վոր լյուպինի ազոտը շատ եր, վնասնեղից եր նա ստացել այդ ավելորդ ազոտը և ինչու հացաբույսը նույնը չեր կարողացել կատարել: Այս յերկույթի պարզաբանման և բացատրման համար նա դիմեց այդ ժամանակվա գիտնականներին:

Շուլցե-լյուպիցի այդ գիմուլը գործնականորեն առիթ տվեց նորից զբաղվել թիթեռնածաղկավորների մշակությունն ու գերը պարզելու ինդրով:

Միայն 1888 թվին ազրոքիմիկոս Հելլիգելի և նրա ոգնական վիլֆարդտի աշխատանքների շնորհիվ այդ խնդիրը վերջնականապես լուծվեց: Վերոհիշյալ

գիտնականները պարզեցին, վոր թիբեռնածաղկաւար բայսերի այս համկարյան պահառը նրանց արմատների վրա յեղող պալարիկներն են: Յեթե նրանց արմատների վրա պալարներ չառաջանան, նրանք ևս, ինչպես թիթեռնածաղկավորները, հողը ազդուային նյութերով վոչ միայն չեն կարող հարստացնել, այլ նաև հողն այդ նյութերից խիստ կաղքատացնեն: Այդ տեղի յեւ ունենում այն ժամանակ, յերբ հողը ստերիլ է, այսինքն հողն իր մեջ բակտերիաներ չի պարունակում: Նրանք ապացուցեցին նաև այն, վոր յեթե ստերիլ հողերում ցանված թիթեռնածաղկավորներն արմատականորեն վարակենք մի ուրիշ հողի վրա ցանված թիթեռնածաղկավոր բույսերի արմատների վրա առաջացած պալարների հյութով, նրանց վրա կարող են առաջանալ պալարիկներ. այս դեպքում բույսերը դարձյալ կունենան հողը հարստացնելու և ողի ազդուվ մնվելու հատկություն: Հելլիքելի և Վիլֆարդտի աշխատանքներից պարզվեց, վոր թիթեռնածաղկավոր բույսերի հողը հարստացնելու հատկությունը վերապահված ե նրանց արմատների պալարիկներին, իսկ այդ պալարներն առաջացնող ները հողի մեջ ապրող հատուկ բակտերիաներն են: Յեթե տվյալ հողի մեջ այդ բակտերիաներից չկինելին, թիթեռնածաղկավորների արմատների վրա պալարիկներ չելին առաջանա և նրանք ողի ազատ ազդուվ մնվելու ընդունակ չելին լինի, հետևապես հողը լավացնելու հատկությունն ել չելին ունենա:

Հենց նույն տարին բակտերիոլոգ Բայերին կին հաջողվում ե թիթեռնածաղկավոր բույսերի արմատների վրա յեղած պալարիկների ստանալ բակտերիաների

մաքուր կուլտուրաներ: Բայերին կը այդ բակտերիաներին անվանեց պալարաբակտերիաներ կամ բակտերիում ուղղիցիկուա: Այսպիսով վերջնականապես պարզվեց, վոր թիթեռնածաղկավոր բույսերի մթնոլորտից ազդուավ սնվելու հատկությունը միմիայն վերապահած ե նրանց արմատների վրա գտնված պալարիկների մեջ զարգացող պալարաբակտերիաներին:

Թիթեռնածաղկավոր բույսերը Յեվ ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ
ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ

Բազմաթիվ փորձեր և ուսումնասիրություններ ցույց են տվել, վոր հողի մեջ ամենուրեք գտնվում են պարաբակտերիաներ և հողի մննդանյութի պայմաններում նրանք զարգանում են: Բայց նրանք ավելի լավ են զարգանում, յերբ ավյալ հողամասում թիթեռնածաղկավոր բույս ե աճում:

Յերբ թիթեռնածաղկավոր բույսն սկսում ե առաջին ծիլերն արձակել, պալարաբակտերիաները բույսի արմատներից արտադրած գրավիչ որդանական սնընդագնյութերի շնորհիվ հավաքվում են արմատների մազարմատների շուրջը: Մազարմատի ծայրի բջիջներից՝ վարակման հատուկ թելիկի միջոցով նրանք սկսում են անցնել արմատի արտաքին վորոշ բջիջների մեջ ու սկսում են այդ բջիջների մեջ յեղած սննդանյութերով մնվել: Բույսի վարակված բջիջները դրվուավելով բակտերիաներից, սկսում են այդ բջիջներում հոկայական քանակությամբ ածխածնային նյութեր արտադրել: Հենց դրա չնորհիվ ել վարակված բջիջները փոխուած են իրենց նորմալ ձևը, ուռչում են

և դրա շնորհիվ ել բույսի վարակված բջիջների այդ մասում առաջ են զալիս փոքրիկ ուսուցիչներ - պալարիկներ։ Այդտեղ ե, վոր բակտերիաներն ապրում են, սկսում են բազմանալ և տալ հոկայտական թվով որգանիզմներ։ Թիթեռնածաղկավոր բույսերը և նրանց արմատների վրա գտնված պալարիկների մեջ ապրող պալարաբակտերիաներն իրար հանդեպ յուրահատուկ փոխհարաբերության մեջ են գտնվում։

Պալարաբակտերիաներն իրենց կենսական պրոցեսների սնվելու, աճելու և բազմանալու համար անհրաժեշտ անաղոտ սննդանյութերը (շաքարներ, հանքային նյութեր) ստանում են բույսի բջիջներից, իսկ ազոտը վերցնում են ողից։ Թիթեռնածաղկավոր բույսերն ել իրենց հերթին բակտերիաներից ստանում են անհրաժեշտ ազոտային նյութեր։

Գաղային ազոտը նախքան պալարաբակտերիաների կողմից յուրացվելը, վորոշ փոփոխության և յենթարկվում։ Նա սկզբում վեր և ածվում լորձնանման ազոտային նյութի, վորը ջրի մեջ լուծվում է։ Հետո այդ լորձնային ազոտային նյութերի մի մասը ներծծվում է պալարաբակտերիաների բջիջի մեջ և վեր և ածվում բարդ սպիտակուցային նյութերի, իսկ մնացած մասն ել բույսի բջիջների կողմից ներծծվում է և գնում տերևների մեջ ու այնաեղ և վերածվում սպիտակուցային նյութերի։

Պալարաբակտերիաների տեսակները բնության մեջ շատ են, նրանց զանազան տեսակներից յուրաքանչյուրը կարող է զարգանալ միայն վորոշ տեսակի թիթեռնածաղկավոր բույսի արմատի վրա։ Որինակ՝ լուրու արմատների վրա զարգացող պալարաբակտերիա-

ները յերբեք չեն կարող աճել վիկի վրա, վիկայինը՝ լորու վրա և այլն։

Դործնականում պալարաբակտերիաները բաժանվում են 7 խմբի։

1-ին խումբ	առվոյտի	պալարաբակտերիաներ
2-րդ և	յերենուկի	պալարաբակտերիաներ
3-րդ և	վիկի	պալարաբակտերիաներ
4-րդ և	լոբու	պալարաբակտերիաներ
5-րդ	լուպինի	պալարաբակտերիաներ
6-րդ և	կոփի փոռոսի	պալարաբակտերիաներ
7-րդ և	սոյայի	պալարաբակտերիաներ

Այս խմբերի պալարաբակտերիաները կարող են զարգանալ միայն վորոշ տեսակի թիթեռնածաղկավոր բույսերի վրա և մնացած այլ թիթեռնածաղկավորների արմատների վրա յերբեք պալարներ չեն առաջացնում։

Պալարաբակտերիաներն ապրելով թիթեռնածաղկավոր բույսերի արմատների վրա՝ յերբեմն ընկույզի մեծությամբ պալարներ են առաջացնում։ Այդ պալարաբակտերիաները բազմամյա թիթեռնածաղկավորների արմատների վրա յերկար տարիներ կարող են ապրել, իսկ միամյա բույսերի վրա մինչև նրանց վերգետացիայի վերջը։ Վեգետացիան վերջանալուց և բերքը հավաքելուց հետո, թիթեռնածաղկավոր բույսերի արմատները մնում են հողի մեջ, նրանց հետ մնում են նաև մեծ քանակությամբ պալարիկներ, այսինքն բակ-

տերիաների մեռած մարմիններ, վոր սպիտակուցային նյութեր են հանդիսանում: Սրանք են, վոր հողի մեջ քայքայվելով հետևյալ տարին ցանվելիք հացաբույսի կամ այլ վոչ թիթեռնածաղկավոր բույսերի համար լրացուցիչ սննդանյութ են դառնում:

Մանրամասն ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր պալարաբակաերիաները զարգանալով թիթեռնածաղկավոր բույսերի արմատների վրա՝ կարողանում են մեկ տարվա ընթացքում մեկ հետար հողային տարածության վրա ողից միջին հաշվով 150-200 կիլոգրամ ազոտ կապել այսինքն ողի այդքան գաղային ազոտից պատրաստել սպիտակուցային նյութ: Նրանք դրանով նպաստում են հողի կապված ազոտի պաշարի շատացմանը, իսկ այս հանդամանքը խոշոր նշանակություն ունի տվյալ հողից հետագա տարիներում մեծ քանակությամբ բերք ստանալու համար:

Հողի կենսաբանական հետազոտությունները ցույց են տվել, վոր հողեր կան, վորոնք թեև ազոտանյութերից հարուստ չեն, բայց յեթե պալար առաջացնող բակտերիաներ են պարունակում, այդ հողերում ցանքած թիթեռնածաղկավոր բույսը շատ լավ է աճում և շնորհիվ պալարներ առաջացնող բակտերիաների, լավ բերք է տալիս, իսկ յեթե այդ հողերի մեջ պալարաբակտերիաները բացակայում են, այն ժամանակ թիթեռնածաղկավոր բույսը վատ է աճում և քիչ ել բերք է տալիս: Յեթե այդ հողերը ազոտային պարաբույնութերով արհետականորեն պարաբացնենք, նրանց մեջ ցանքող բույսերը նորից նորմալ կերպով կածեն և բավարար բերք կստացվի:

Ցերկար ժամանակ քննվում եր այն հաբու, թե

ինչպես անեն, վոր պալարաբակտերիաներ չպարունակող հողերն այդ պալարաբակտերիաներից ունենան, մանավանդ վոր այդ հողերին արհետականորեն ազոտային պարաբտանյութեր տալը մեծ ծախսերի հետ և կապված, իսկ այդպիսի հողերում պալարաբակտերիաներ ունենալուց հետո, պարաբտացման հարցը վորոշ չափով կհեշտանա:

Հողի պալարաբակտերիաներով վարակելու կամ պատվաստման գործը նոր ե, 35-40 տարվա պատմություն հազիվ ունի:

Հողի պատվաստելու նպատակն այն ե, վոր պալարաբակտերիաներ չպարունակող անբերը հողերը պալարաբակտերիաներով հարստացման միջոցով լավանան ու պաղարեր դառնան, վորով յերկրագործությունը պատվաստման միջոցով ազատվում է հողին անընդհատ պարաբտանյութեր տալուց:

ԽԵԶՊԵՍ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՆԻՏՐԱԳԻՒՄ ՊՐԵՊԱՐԱՏԸ

Խնչպես առաջինք, ամեն մի թիթեռնածաղկավոր բույսի արմատների վրա զարգանում են այդ բույսին հատուկ պալարաբակտերիաներ: Դրա համար ել տվյալ թիթեռնածաղկավոր բույսը վարակելու համար, պատրաստում են նրա պալարաբակտերիաներից «Նիտրագին» պրեպարատը: Վորևէ թիթեռնածաղկավոր բույսը նիտրագին պարաբտանելու համար, նրան ցանում են այնպիսի հողերում, վորտեղ նրա արմատների վրա պալարներ են առաջանում:

Բույսը վեգետացիայի ընթացքում, յերբ վորոշ բարձրություն ունի (ավելի լավ է ծաղկման նախո-

ըյակեն) զգուշությամբ հողից արմատներով հանում են, արմատները հողից աղատելու համար մաքուր ջրի մեջ զգուշությամբ լվանում են: Լվացումը կատարվում ե պյութան, վոր պալարների վրա հողի փոքր մասնիկներ անդամ չմնան: Արմատները մաքուր լվանալուց հետո, պալարները արմատներից հատուկ ունելիի միջոցով կտրում են, հավաքում առանձին հատուկ անոթի մեջ, մաքուր ջրով նորից լվանում, վորպեսզի հողի մասնիկները հիմնովին հեռացվեն: Պալարիկները շատ մաքուր լվանալուց հետո 1-2 րոպե պահում են սպիրտի մեջ, վորպեսզի նրանց մակերեսի վրա մնացած կողմնակի բակտերիաները մահանան, վորից հետո պալարիկները հատուկ մաքուր հավանդի մեջ տրորում են, բակտերիաներից զուրկ փոքրաքանակ ջրի մեջ: Տրորելու ժամանակ պալարիկների մեջ յեղած պալարաբակտերին անցնում են հեղուկի մեջ: Ստացվում է կիսալորձնույթին հեղուկ: Ստացված պալարաբակտերիալ հեղուկից շատ քիչ քանակությամբ ցանում են լաբորատորիայում հատուկ պատրաստված պինդ մնացանյութի մեջ, վորպեսզի պալարաբակտերիաներն ամեն մեկն առանձին-առանձին զարգանան: Եթե այդպիսի միջավայրում պալորաբակտերիաները զարգանալով առաջացնում են համապատասխան գաղղութներ, ամեն մի գաղութից զգուշությամբ վերցնում են նրանց և նոր սննդանյութի մեջ զարգացնում: Սննդանյութից սննդանյութի մեջ փոխադրելու այս գործողությունը մի քանի անգամ կատարելով՝ պալարաբակտերիաների մաքուր գիծ և ստացվում: Պալարաբակտերիաների մաքուր գիծ ստանալուց հետո, նրանց լաբորատոր պայմաններում համապատաս

խան թիթեռնածաղկավոր բույսերի վրա փորձարկում են, այսինքն այդ բույսից մեկուսացրած պալարաբակտերիաներով վարակում են նրա սերմերը: Վարակված սերմերը ցանում են պալարաբակտերիաներից զուրկ հողերի մեջ: Բույսի ծլերուց և վորոշ ժամանակից հետո, յերբ հողում նրա արժատների վրա առաջանում են շատ և մեծ հատուկ պալարիկներ, նշանակում ե փորձարկված պալարաբակտերիան մաքուր և և ակտիվ վորն ինքն ըստ ինքյան ապահովում և բույսի բերքը:

Լաբորատորիայում մաքուր կուլտուրաներ ստանալուց հետո հեղտ և արդեն նիտրագին պատրաստել: Այդ մաքուր և ակտիվ պալարաբակտերիաներից նիտրագին պատրաստելու համար, վերցնում են պարտեզի մնացանյութերով հարուստ հող: Նրան ավելացնում են $\frac{1}{3}$ չափով մաքուր ավաղ (յեթե հողը կավային ե), վորպեսզի հողի աերացիան լավ լինի: Այդ հողը լցոնում են մեկ կիլոգրամ տարողություն ունեցող թիթեղյա բանկաների մեջ: Բանկաներով հողը յենթարկում են ստերիլիզացիայի, այսինքն նրա միջի յեղած բոլոր բակտերիաները վոչչացնում են: Ստերիլիզացիան կատարվում ե հատուկ պալարատների միջոցով (ավտոկլավներում), վորոնց մեջ հարավոր և 100-125 աստիճան ջերմություն ստանալ: Այդ ջերմությունից հողի մեջ յեղած բոլոր տեսակի բակտերիաները մահանում են:

Ստերիլիզացիայից հետո տուփը թողնում են վոր սառչի, այսինքն ունենա սովորական ջերմաստիճան՝ 16-25 աստիճան:

Յերբ հողով լցրած տուփերը ստերիլիզացիայի յեն-

Թարկված պատրաստ են, տուփի բերանը զգուշությամբ բաց են անում, լցնում են նրան հողի մեջ և տուփի բերանը նորից ամուր փակում են, վորպեսդե նրա մեջ դրսից կողմանկի բակտերիաներ չընկնեն և պալարաբակտերիաներին չեղուածեն:

Այդ տուփը պալարաբակտերիաներով վարակված հողն է, վոր կոչվում է «նիտրագին», նիտրագին նշանակում և աղոտ կապող:

Փորձերը ցույց են տվել վոր պալարաբակտերիաներով վարակված մեկ կիլոգրամ հողը բավական է մեկ հեկտարի վրա ցանքելիք թիթեռնածաղկավոր բույսի սերմերը վարակելու համար:

Նիտրագինը՝ պալարաբակտերիաներով վարակված հողը՝ յուրաքանչյուր տուփի մեջ պարունակում և միայն վորոշ թիթեռնածաղկավոր բույսի պալարաբակտերիա-դրա համար ել տուփի վրա միշտ դրվում են «նիտրագինառվոյցի», «նիտրագին կորնդանի», «նիտրագին վիկայի» և այլն: Այդ նշանակում է, վոր տուփի մեջ գորնվում են նշված թիթեռնածաղկավոր բույսի պալարաբակտերիաներ:

ԽԵԶՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԱԾՈՒՄ ՆԻՑԲԱԳԻՆԸ

Յերբ կոլտնտեսությունը կամ խորհունտեսությունը հողբաժնից կամ Սելլուզինարից գնում և թիթեռնածաղկավոր բույսի համար համապատասխան բակտերիան պարաբատանյութ՝ պրեպարատը՝ նիտրագինը, պետք եւ աշխատել տուփի բերանը բաց չանել մինչև նրա գործածելը: Նախքան թիթեռնածաղկավոր բույսի ցանելը, 24 ժամ առաջ, տուփի միջի յեղած հողը

պետք եւ լցնել համապատասխան քանակի յերեսը քաշած կաթի մեջ: Կաթը նախքան պալարաբակտերիաներով վարակելը, պետք եւ տաքացնել մինչև յեփը: Յեփն այն նշանակությունն ունի, վոր կաթի մեջ յեղած կողմանկի բակտերիաները մահանում են: Կաթը տաքացնելուց հետո նրան պետք եւ նորից սառեցնել մինչև 30-35 աստիճան, այսինքն մինչև գոլ վիճակը: Դրանից հետո նիտրագինի տուփի բերանը զգուշությամբ պետք եւ բաց անել և նրա միջի հողը լցնել գոլ կաթի մեջ, լավ խառնել հետո ամանի բերանը ծածկել և պահել տաք վայրում (այնպիսի սենյակում, վորն ունենա 20-25 աստիճան ջերմություն): 4 ժամ:

Վերցրած յերես քաշած կաթի բանակը կախված եւ ցանվելիք թիթեռնածաղկավոր բույսի սերմերի ծավալից: Յեթե սերմերը մեծ ծավալ ունեն, որինակ կորընդանի և վիկայի սերմերը, այն ժամանակ կաթը շատ պետք եւ վերցնել, որինակ այս գեպքում նիտրագինի ամեն մի տուփին կրավականան: 6-7 լիտր յերես քաշած կաթ, իսկ յեթե սերմերի ծավալը փոքր է, ինչպես որինակ առվորդտի սերմը, բավական է՝ 4 լիտր կաթ: Նիտրագինի պրեպարատի բաց անելը յերես քաշած կաթի մեջ այն նպատակն ունի, վորպեսզի տուփի մեջ յեղած պալարաբատակտերիաները կաթի մեջ աշխատ գորգանան և բաղմանան: Կաթը պալարաբակտերիաների համար լավ մննդանյութ եւ հանդիսանում, պալարաբատակտերիաները կաթի մեջ վոչ միայն լավ զարգանում և բազմանում են, այլ նաև ակտիվանում են և նրանց վարակիչ հատկությունն ուժիղանում եւ:

Պալարաբատակտերիաները 24 ժամ կաթի մեջ պարացնելուուց հետո, այդ բակտերիաների տեր թիթեռն

նածաղկովոր բույսերի սերմերը կաթի մեջ պետք է թրջել: Թրջելուց հետո, նախքան ցանելն անհրաժեշտ է, վոր սերմերը հատուկ բրեվինտե շորի վրա փուլեն, վորպեսի նրանք միմյանց չկպչեն և ցանելը հնարավոր լինի:

Եհրը ցանվելիք թիթեռնածաղկավոր բույսի սերմերը բրեղենտի վրա քիչ չորանում են, այսինքն տամկածի տեսք են ընդունում, անմիջապես պետք է սերմերը դաշտ տանել և ցանել:

Պալարաբակտերիաներով վարակված սերմերը (նայած տնտեսության հնարավորություններին) կարելի յե ամեն կերպ ցանել, բայց ցանկալի յե, վոր ցանվեն անպայման շարքացանով:

Շարքացանով ցանելիս թափող անցքի բերանը սովորականից մի քիչ ավելի պետք է բաց անել: Ավելի լավ կլինի, յեթե վարակված սերմերը ցանելու համար անցքի մեծությունը ճիշտ վորոշվի: Պատահում են գեպքեր, յերբ սերմերը թրջվելիս քիչ ուռչում են և կպչուն են դառնում, դրա համար ել շարքացանի շտեմարանի անցքը, յեթե սովորական ենք թողնում, այն ժամանակ նոսր ե ցանվում: Տնտեսությունն այս հանդամանքն անպայման հաշվի պետք ե տոնի:

Պալարաբակտերիաներով վարակված սերմերի ցանքը պետք է կատարել առավոտյան շատ շուտ, նախքան արևածագը կամ ուշ յերեկոյան՝ արեամուտի ժամանակ: Սա այն նշանակությունն ունի, վոր արեկի ճառապայթները սերմերի վրա գտնված պալարաբակտերիաների վրա չեն ազդի, հակառակ գեպքում պալարաբակտերիաները կվոչնչանան: Ամպամած որվա բռլոր ժամերին կարելի յե վարակված սերմերը ցանել:

Յերբեմն կարող ե պատահել վոր վերցրած 6-7 լիտրը կաթը չբավականանա մեկ հեկտարի վրա ցանվելիք տվյալ թիթեռնածաղկավոր բույսի սերմերը ամբողջությամբ թրջելու համար: Դրա համար ել անհրաժեշտ է տմեն անդամ կաթը տաքացնելու ժամանակի նույն քանակությամբ ել առանձին ամանով ջուր տաքացնել և հովացնել: Զուրն առանձին պահել մինչև հետևյալ որը, այսինքն մինչև սերմերը կաթով թրջել: Սերմերը նախքան թրջելը, այդ տաքացրած և հովացրած ջուրը լցնել պալարաբակտերիաներ պարունակող կաթի մեջ և լավ խառնել ու ապա նոր տվյալ սերմերը թրջել այդ հեղուկով:

Յեթե տնտեսությունը յերեսը քաշած կաթի նկատմամբ գժվարությունների հիանդիպի, այն գեղքում կարելի յե վերցնել խմելու ջուր:

Զուրը նույնպես պետք է վերցնել նույն հարաբերությամբ ինչ վոր կաթը, միայն այն տարրերությամբ, վոր ջուր ողտագործելիս կարիք չկա նիտրագին բանկայի պարունակությունը 24 ժամ ջրի մեջ պահել, այլ բանկայի պարունակությունը ջրի մեջ պաց անելուց հետո անմիջապես կարելի յե այդ խառնուրդով սերմերը թրջել և նրանց տամկած վիճակում անմիջապես ցանել:

Զուր գործածելիս անհրաժեշտ է դա յեռացնել, հետո սառեցնել ու նոր միայն նիտրագին բանկայի հողը այդ ջրի մեջ բաց անել:

Զուրը յեռացնելիս մենք նրա միջի կողմնակի բակտերիաները վոչնչացնում ենք:

ՆԻՇՐԱԳԻՆԻ ԿԻՌՈՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ
ՏՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նիտրագինի գործադրումը Խորհրդային Միության մեջ ե, վոր ներկայում հսկայական չափերի յե հասել, Նրա արտադրությունը մեզ մոտ արդեն գործարանալին բնույթ ե կրում ե, վոր կարևոր ե, մեր սոցիալիստական տնտեսության մեջ նիտրագինի գործածությունն այժմս թիթեռնածաղկավոր բույսերի բերքատվության բարձրացման համար կարևոր ագուճենարկումներից մեկն ե հանդիսանում:

Եթե մինչև 1930 թիվը նիտրագինը հաղիվ միքանի տասնյակ հազար հեկտար թիթեռնածաղկավոր բույսերի վարակման համար եր միայն ոգտագործվում, ապա 1930 թվին արդեն միայն սոյայի ցանքով 200 000 հեկտար վարակելու համար պատրաստվում ե սոյայի նիտրագինը, 1932 թվին այդ քանակը միայն սոյայի համար հասնում ե 400 000 հեկտարի, իսկ 1937 թվականին բոլոր տեսակի թիթեռնածաղկավոր բույսերի համար պատրաստվել ե արդեն 700 000 հեկտարի վարակման համար նիտրագին:

Խորհրդային Հայաստանում թիթեռնածաղկավոր բույսերի համար նիտրագինն ոգտագործվել ե 1936 թվին 7 000 հեկտարի համար:

Հայաստանի հողային պայմաններում պալարաբակտերիաներով հողերը պարաբացնելու փորձերն առաջին անգամ 19 4 թ. սկսել ե կիրառել Հայաստանի պարաբացման կայանը մեր մասնակցությամբ կայանը դեռ 1932 թվից զբաղվել ե Հայաստանում տարածված թե կուլտուրական և թե վայրի թիթեռ-

նածաղկավոր բույսերի պալարաբակտերիաների մաքուր կուլտուրաների ակտիվ և վիրուենտ տեսակների մեկուսացման աշխատանքներով:

Յերբ հաջողվեց ստանալ պալարաբակտերիաների մաքուր տեսակներ, դրանք փորձարկվեցին համապատասխան բույսերի վրա, վեգետացիոն անոթների մեջ ստերիլ հողային պայմաններում, վորից հետո միայն 1934 թվականին պատրաստվել ե նիտրագին պլիպարատը:

Նիտրագինով թիթեռնածաղկավոր բույսերի պարաբացման փորձերը գրված են Հայաստանի տարբեր շրջանների կոլխոզային դաշտերում:

Բացի մեր կողմից պատրաստված նիտրագինի պրեպարատից, փորձարկվել ենակ Մոսկվայից ստացված առվույտի նիտրագին պրեպարատը:

Նիտրագինի փորձերի համար մենք գլխավորապես ոգտագործել ենք առվույտը, կորնգանը և վիկան՝ ի նկատի ունենալով, վոր այդ կուլտուրաները Հայաստանում մշակովի խոտաբույսերի շարքում խոշոր տեղ են գրավում: Նրանք մշակվում են թե դաշտավարական, թե նախալեռնային և թե լեռնային շրջաններում:

Մեր կողմից մեկուսացված ակտիվ պալարաբակտերիաներով և Մոսկվայից ստացված պրեպարատով հողերի վարակման և նրանց հֆեկտիվությունը վորոշելու փորձեր գրված են Հայկական Խորհրդային Մոցիւրական Հանրապետության հետևյալ շրջաններում:

1. Հոկտեմբերյան (դաշտային) շրջանի Արմալու, Բամբակաշատ և Հոկտեմբեր կոլխոզների դաշտերում—առվույտի վրա:

2. Աենինականի (միջին լեռնային) շրջանի փորձաւսելեկցիոն կայանի և ճակնդեղի սովորողի հողամասերում—տովույտի, կորնգանի և վիկայի վրա:

3. Ախտայի և նոր Բայազետի (լեռնային) շրջանների Ներքին Ախտայի և Սարուխանի կոլլագների հոգամասերում—կորնգանի և վիկայի վրա:

Փորձերը դրված են հատկապես այն հողակառներում, վորոնք գտնվում են ցանքաշրջանառության մեջ և ներկայացնում են մեծ մասսիմեր, վորոնց վրա ըստ կոլլագի արտադրական պլանի նախատեսված և տվյալ թիթեռնածաղկավոր բույսերի մշակությունը:

Նիտրագինով հողերի պարարտացման եֆեկտիվությունը վորոշելու ժամանակ հետազոտվել է նաև ֆոսֆորական պարարտանյութի աղղեցությունը պարզելու համար, թե այդ պարարտանյութն ինչ նշանակություն ունի տվյալ թիթեռնածաղկավոր բույսի բերքատվության, ինչպես նաև պալարաբակտերիաների գործունեյության վրա:

Ֆոսֆորական պարարտանյութի համար գործածվել են սուպերֆոսֆատը, վորը մեկ հեկտարին տրվել են վորպես ֆոսֆորական թթվի անհիդրիտ 90 կիլոգրամի հաշվով: Փորձերն ունեցել են հետևյալ սխեման:

1. Կոնտրոլ

2. Սուպերֆոսֆատ

3. Սուպերֆոսֆատ—Նիտրագին

4. Նիտրագին:

Ցանքսից հետո հաշվի յե առնվել բույսի ծլման ժամկետը, նրա թփակալումը, ծաղկումը, պատիճաշվորվել և բերքահավաքը:

Թփակալման, ծաղկման, պատիճավորման ժամա-

նակ և նախաքան բերքահավաքը կատարված են նաև արմատների հետազոտություն, նրանց ճյուղավորվածությունը, տարածվածությունը և խորությունը պարզելու համար, բացի այդ ուսումնասիրվել են նաև արմատների վրա առաջացող պալարիկների քանակը, նրանց մեծությունը և տարածվածությունը:

ՆԻՏՐԱԳԻՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՅՍԻ ԱՃԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Առվույտի, կորնգանի և հատկապես վիկայի մոտ, նիտրագինով պարարտացրած հողամասերում, լինի դասուպերֆոսֆատով թե առանց սուպերֆոսֆատի, մասսայական ծլման պլրոցեսը, համեմատած նիտրագինով չվարակված սերմերի հետ, 3-5 որ առաջ եր վերջացել: Բույսի հետազա աճեցողությունն ավելի փարթամ եր նիտրագինով վարակված հողամասերում: Վորոշ գեղցերում առվույտի աճեցողության մեջ խիստ տարբերություն է նկատվել: Որինակ, յերբ հացահատիկը քաղվել ե և թիթեռնածաղկավոր բույսին տրվել ե նրա առաջին ջուրը (Հոկտեմբերյան շրջանում), նիտրագինով և նիտրագին սուպերֆոսֆատով պարարտացրած հողամասում կարճ ժամանակից հետո բույսերը շատ զգարթ են ստացել, իսկ նրանց բարձրությունն արգեն, միջին հաշվով, հասնում եր 10-15 սմ., այնինչ կոնտրոլ և միայն սուպերֆոսֆատով պարարտացրած հողամասերում, աճման տվյալ շրջանում նրանք հաղիղ եյին գետնի յերեսից բարձրացել ե առաջին տերմերը տվել:

Բույսի հետազա աճեցողության ինտենսիվությու-

Նը դարձյալ ավելի լավ եր արտահայտվում նիտրա-
գինով պարարտացրած հողամասերում: Նիտրագինով
պարարտացրած համարյա բոլոր բույսերի մոտ թփա-
կալման պրոցեսն անհամեմատ ավելի լավ եր ընթա-
նում, քան չվարակված բույսերի մոտ Այսպես, որի-
նակ, յեթե նիտրագինով չվարակված հողամասերում
ցանված վիկան ուներ միայն մեկ վերերկրյա ցողուն,
առանց ճյուղավորությունների, այն ինչ նիտրագի-
նով վարակված հողամասերում, ընդհակառակը, բույսը
վերերկրյա մասում ուներ ։, հաճախ յերեք կենտրո-
նական մասից զուրս յեկող իրար հավասար բարձրու-
թյամբ ցողուններ, միայն վորոշ գեղքերում զինա-
վոր ցողունն ավելի բարձր եր, քան յերկըրդական
և յերրորդական ցողունները: Կոնտրոլ և սուլերֆու-
ֆատով պարարտացրած հողամասերում շատ սակալ
եր այն յերկույթը, յերբ գլխավոր ցողունն ունենար
շական ցողուն կամ ճյուղավորություն:

Առվույտի և կորնգանի մոտ թփակալման նման
ճյուղավորման պրոցեսն ավելի լավ եր արտահայտ-
վում հատկապես յերկրորդ տարում:

Միայն նիտրագինով պարարտացրած հողամասում
բույսերի ընդհանուր բարձրությունը կոնտրոլի հետ
համեմատած 20 սմ.-ով ավել եր:

Բոլոր փորձերում նկատելի յեր նաև այն, վոր սու-
պերֆուֆատով պարարտացրած հողամասում բույսի
ծաղկման պրոցեսն ավելի շուտ սկսվեց, քան կոնտրո-
լում: Իսկ սուպերֆուֆատը նիտրագինի հետ պարա-
րտացրած հողամասերում ծաղկման պրոցեսը, ճիշտ ե,
կոնտրոլի հետ համեմատած ավելի ուշ սկսվեց, բայց
միայն նիտրագինով վարակված հողամասի հետ հա-

մեմատած ավելի շուտ: Որինակ՝ յիթե վիկայի մոռ-
պալարաբակտերիաներով վարակված բույսերը նոր-
միայն սկսել եյին ծաղկել, սուպերֆուֆատ նիտրա-
գինով պարարտացրած հողամասերում բույսերն ար-
դեն պատիճավորվել եյին:

Այս յերկույթն ավելի լավ եր արտահայտվում վի-
կայի, քան առվույտի և կորնգանի մոտ:

ՆԻՏՐԱԳԻՆԻ ԱԶԴԵՑՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՄԱԾՆԵՐԻ ՅԵՎ,
ՊԱԼԱՐԵՆԵՐԻ ՎՐԱ

Նիտրագինի ազդեցությունը թիթեսնածաղկավոր-
ույսերի արմատների խորության, տարածվածության,
ճյուղավորվածության և նրանց վրա առաջացող պա-
լարիկների մեծության ու նրանց դասավորության
վրա շատ մեծ ե: Մեր փորձերի ժամանակ արված
պիտույքյուններից մի ընդհանուր յերկույթ միշտ ել
աչքի յե ընկել:

1. Դա այն է, վոր նիտրագինով վարակված բույ-
սերի արմատային սիստեմը, համարյա բոլոր տեսակի
հետազոտվող թիթեսնածաղկավոր բույսերի մոտ ավե-
լի ուժեղ ե, նրանց արմատային ճյուղավորությունը
5-30 սմ. խորությունում անհամեմատ լավ ե, քան
30-սմ.-ից ցած խորությունում: Նիտրագինիցացիայի
յենթարկված բույսերի գլխավոր արմատը շատ խորը
չի թափանցում, այդ յերկույթն ավելի ակնբախ ե
վիկայի մոտ, քան առվույտի և կորնգանի: Իսկ վո-
րոշ գեղքերում առվույտի մոտ գլխավոր արմատից
մի քանի իրար հավասար խորը գնացող արմատներ
են առաջ գալիս: Բայց սրանց մոտ հողի ներքին շեր-

տերի խորաթափանցելիությունն անհամեմատ թույլ է, քան թե նիտրագինով չպարսրաացրած բռյաերի մոտ: Ընդհակառակը՝ կոնտրոլի և սուպերֆուսֆատի պարարտացրած հողամասերում թիթեռնածաղկավոր բույսերի արմատային սիստեմն ավելի թույլ ե և զըլ խափոր արմատն ավելի խորը գնացող:

Վերջիններիս մոտ հողի վերին շերտերում արմատային ճյուղավորման սիստեմը շատ թույլ ե և նրանց հորիզոնական տարածվածությունն անհամեմատ կարճ: Այս յերեսութիւն ավելի լավ արտահայտվում եր կորցնանի և առվույտի մոտ: Որինակ առվույտի մոտ, նույնիսկ առաջին տարին, աշնանը կոնտրոլի մոտ զլիափոր արմատի խորությունը հասնում եր մինչեւ մեկ մետրի, այնինչ նիտրագինով վարակված բույսի մոտ, այդ խորությունը հազիվ հասնում եր 40-65 սմ., իսկ յերկրորդ տարին այդ տարրերությունն ավելի մեծ եր:

2. Նիտրագինով վարակված հողամասերում նկատելի յեր, վոր պարագիններն արմատների վերին ճյուղավորություններում աղելի մեծ քանակությամբ են խմբավորված, քան մնացած մասերում: Բացի այդ, նրանք վերին մասերում ավելի շատ են, խոշոր ու տողած, իսկ ներքին արմատային սիստեմում յեղածների քանակը համեմատաբար քիչ ե և շատ փոքր:

Կոնտրոլ հողամասում ցանված բույսերի արմատների վրա նույնպես առաջ են գալիս պարագիններ, բայց նրանք խմբված չեն, նրանց քանակը համեմատաբար շատ քիչ ե, ինչտ տարածված են և, վոր կարևորն ե, շատ փոքր են:

Նիտրագինով վարակված բոլոր բույսերի մոտ պա-

լարիկների քանակն ավելի շատ եր, քան չվարակվածների մոտ:

Նիտրագինի ԱջդեօնիթՅունը Բերքի ՎՐԱ

Խոտհունձը կատարվել ե հատկապես այն ժամանակ, յերբ ամբողջ փորձադաշտը $50\text{--}60^{\circ}\text{C}$ -ով ծաղկման պլոցեսում և դանվել:

Առվույտի վրա շատ լավ ե ազդում ֆոտֆոր նիտրագինային պարաբացումը, միայն այն տարրերությամբ, վոր բույսերն այս պայմաններում ավելի շուտ են վայտացման պլոցեսին անցնում: Այդ աեւսակետից ել բոլորովին այլ պատկեր ենք տեսնում միայն նիտրագինով պարաբացրած բույսերի մոտ: Այդ պարաբանյութի ազդեցության տակ բույսն ավելի փարթամանում ե և բարձր եւ կարևորն այն է, վոր բույսը շատ թարմ ե, փայտացումը շատ ուշ և սկսվում:

Կորնպանը նիտրագինի ազդեցության տակ շատ լավ ե աճում:

Վիկան նույնպես դեպի նիտրագինը նույն վերաբերմունքն ե ցույց տալիս:

Խոտհունձը կատարելուց հետո խոտի մասսայի հաշվառումը կատարվել ե այն ժամանակ, յերբ բույտը չոր խորձերի վիճակումն եր: Թե ինչպիսի արդյունքներ (բերք) են ստացել այս կամ այն ձեփ պարաբացման ժամանակ, ցույց ե տալիս աղյուսակ առաջինը:

Աղյուսակ 1. Խոսի ստացված բերքը (հեկտար—թնանըրով)

Տ	Շրջաններ	Կոլուսուն-թյուն	Թիվի թեռո-նամադաշիք բառականություն	Փորձը՝ սիեսամա-		Մասնիչներուն
				Առջևութեան	Ներարա-սացվածներ	
1.	Առջևութեան	Առջևութեան	Սանկուլա- յի թիւն լսու- տացվածներ	20, 27	26, 69 29, 55 27, 68	0%
				100	128, 5 142, 22 133, 3	
	Բարիւթականատ	Բարիւթականատ	Յանկա- յի թիւն լսու- տացվածներ	30, 49	34, 69 44, 95 40, 88	0%
				100	111, 03 146, 5 133, 2	
	Հայաստանի թիւն	Հայաստանի թիւն	Սանկուլա- յի թիւն	22, 62	26, 1 31, 7	30, 03 0%
				100	116, 7 140, 14 132, 8	
2.	Դաշտավայրական	Դաշտավայրական	Եղանակա- յի թիւն լսու- տացվածներ	2	2	
					19, 24	24, 37 28, 15 27, 35
					100	111, 2 146, 3 142, 1, 0
	Աղաւան	Աղաւան	Չեղաւան	2	2	
					18, 46	22, 00 35, 80 33, 29
					100	119, 2 163, 5 180, 33 0%
3.	Աղաւան	Աղաւան	Վայրական	2	2	
					54, 79	56, 80 64, 15 68, 33
					100	103, 80 117, 1 124, 7, 0
	Մակար	Մակար	Մակար	2	2	
					37, 00	43, 50 50, 000 51, 75
					100	117, 6 135, 12 145, 27 0%
4.	Մակար	Մակար	Մակար	2	2	
					0	0

Աղյուսակում չեն բերված կորնդանի բերքի վերաբերյալ ամյացները։ Փորձադաշտը գտնվում եր ն. Ախտայում։ Այդ փորձադաշտի կորնդանի բարձրության չափումները կատարելուց հետո, նախքան խոսհունձը նույն այդ որվա գիշերն ուժեղ կարկուտի հետևանքով ամբողջ բերքը փչացավ և մենք հնարավորություն չունեցանք արդյունքը պարզեց։

Բայց կորնդանի վերաբերյալ պետք ե նշենք, վորմեր կողմից նրա աճի նկատմամբ կատարած դիտողությունները ցույց ենին տալիս, վոր ն. Ախտայում նիտրագինով պարարտացումը նույն աղդեցությունն եր թողել կորնդանի վրա, ինչ վոր վիկայի վրա։ Նիտրագինի աղդեցության ընօրինվ սպասվում եր կարնդանի բերքի 40-45% ավելցում։

2. Հենիսականի փորձասելեկցիոն կայանի հողամասում կորնդանի նիտրագինի վայրացիայի ժամանակ նիտրագինն այնքան ուժեղ եր աղդել բույսի աճեցողության և սերմակալման վրա, վոր կայանի գիտաշխատողների միջամտությամբ և ցանկությամբ աղդամաշտը թողնվեց վորպէս սերմարան։ Փորձերի արդյունքներից յերեսում ե, վոր նիտրագինով և նիտրագին-փոսփորով պարարտացրած հողամասերում կորնդանը շատ ավելի լավ ե աճում և բավական շատ սերմակալում, քան կոնարոկ և միայն փոսփորով պարարտացրած հողամասերում։

Առջևույթից և վիկայից ստացված բերքի տվյալները, ինչպես աղյուսակումն ե ցույց տրված, գալիս են մի անդամ ևս ապացուցելու, վոր Հայտատանի հոգային պայմաններում նիտրագինն այդ բույսերի բեր-

քատվության բարձրացման գործում խոշոր նշանաւ կություն ունի:

Այդ տվյալները վերաբերվում են միայն մեկ հարեն, այն ինչ առվույտը բամբակացան շրջաններում քաղվում է 2-3 և յերբեմն ել 4 անգամ, իսկ մեր փորձագոտի պայմաններում նիտրագինի աղղեցությունը համարյա բոլոր ժամանակներում կատարված բերքահավաքի դեպքում համահավասար եր:

Ինչպես վերելում հիշատակեցինք, Հայաստանի հողերում ամենուրեք գտնվում են պալարաբսկտերիաներ, բայց ինչպես փորձերն են ցույց տալիս, նրանց ակտիվությունը և ազոտակապելու ունակությունը շատ թույլ ե, իսկ յերբ այդ հողերում նոր, ակտիվ պալարաբսկտերիաներ ենք մացնում, առվույտի բերքը բավականին ավելանում ե, որինակ՝ Արմալու կոլխոզի դաշտում միայն նիտրագինն առվույտի բերքը բարձրացնում է 33,3^{0/0}-ով, լենինականում 80,33^{0/0}-ով:

Ավելացած բերքի քանակը տարբեր ե, նայած տըգյալ շրջանի հողային և կլիմայական պայմաններին և հող մտցրած պալարաբտկտերիաների ակտիվությանը:

Առվույտի բերքն ավելի բարձր ե այն հողամասերում, վորտեղ նիտրագինի հետ մտցրված ե նաև փոսփորային պարաբուտանյութ:

Յեթե բույսի աճը փոսփոր նիտրագին ստացած հողակտորում (վեգետացիայի վերջին շրջանում) ավելի թույլ եր համեմատած միայն նիտրագին ստացած հողի բերքի հետ, դա յեղել ե հոգուտ չոր մասսայի շատանալուն: Այս պայմաններում առվույտից ստացված բերքի քանակը 4,13^{0/0}-ով բարձր ե միայն նիտրա-

պին ստացած հողամասի առվույտի բերքից, իսկ կոնտրոլի հետ համեմատած 40,14—90,91^{0/0}-ով ավելի:

Բացի այս փորձերից, Բամբակաշատում և Հոկտեմբերում 1936 թվին դրված եր մեկական հեկտար աարածության վրա միայն նիտրագինով առանց ֆոսֆորի վարակման վորձը՝ 0,5 հեկտարը պարարտացվել ե նիտրագինով, իսկ մյուս 0,5 հեկտարը թողնվել ե կոնտրոլ: Արդյունքը յեղել եր այն, վոր 1936 թվականին առաջին քաղի ժամանակ Բամբակաշատում նիտրագինով չվարակված հողամասում ցանված առվույտի մեկ հեկտարից ստացվել եր վորպես չոր խոռ 31,43 ցենտներ բերք, մինչդեռ նիտրագինով վարակվելու դեպքում նույն մեկ հեկտարից ստացվել եր 38,8 ցենտներ բերք:

Հոկտեմբերում այդ հարաբերությունը յեղել ե կոնտրոլ հողամասում՝ 22,5 ցենտներ, նիտրագինով պարարտացրած հողամասում՝ 28,0 ցենտներ: Բամբակաշատի կոլխոզում ոգտագործվել եր Յերևանում պատրաստված նիտրագինը, իսկ Հոկտեմբերում՝ Մոսկվայից ստացված նիտրագինը:

Փորձերի արդյունքներից կարելի յե յեղբակացնել, վոր մեր տեղական պալարաբտկտերիաներից պատրաստված նիտրագինն ավելի լավ արդյունքներ ե տալիս, քան Մոսկվայից և մերից տարբեր կլիմայական և հողային պայմաններ ունեցող մի այլ վայրից ստացված նիտրագինը:

Դա պետք ե բացատրել նրանով, վոր մեր կողմից մեկուսացված պալարաբտկտերիաները մեր տեղական պայմանների համար ավելի վիրուլենտ (այսինքն վարակելու ունակ) են և ակտիվ: Ճիշտ ե, Մոսկվայից ստացված նիտրագինը նույնպես ընդհանրապես, առ-

վույտի բերքը բարձրացնում ե, բայց բարձրացման առկոսը համեմատաբար, ավելի պակաս ե, քան Յերեւանում պատրաստված նիտրագինն ոգտագործելու դեպքում: Այսպէս որինակ՝ յիթե բամբակացման շըրջանում Մոսկվայից ստացված նիտրագինը ֆոսֆորական պարարտանյութի հետ չոր խոտի քանակն ավելացնում ե, կոնտրոլի հետ համեմատած, 40,14—42,27%՝ ով, Յերևանում պատրաստված նիտրագինը նույն ֆոսֆորային պարարտանյութի հետ բերքը բարձրացնում ե 46,5%՝ ով: Այդ տարեկությունն ավելի ցայտուն ե արտահայտվում Լենինականում (ճակնդեղի սովորում) դրված փորձարարաշտում: Մոսկվայի նիտրագինը նույն պարարտանյութերի հետ առվույտի բերքը յիթե բարձրացնում ե 46,3%, ապա Յերևանի նիտրագինը բարձրացնում ե 93,91%՝ ով:

Այս տվյալներից յենելով ել մենք կարող ենք ասել, վոր տեղական կլիմայական և հողային պայմաններում ակլիմատիզացիայի յենթարկված բույսերից մեկուսացված վիրուլենտ պալարաբակտերիաներից պարաստված նիտրագինը խոշոր նշանակություն ունի թիթեռնածաղկավոր բույսերի բերքատվության բարձրացման գործում: Վիկայի բերքի հաշվառման ժամանակ նկատվում ե, վոր Փոսֆորային պարարտանյութի ազդեցության տակ վիկայի բերքը պակասում է, վիկայի ցանքսադաշտերում միայն նիտրագինի պիրավարանական պարաստված ոգտագործելիս՝ վիկայի բերքը շատ ավելի բարձր ե լինում, քան նիտրագինը ֆոսֆորային պարարտանյութի հետ ոգտագործելիս: Որինակ, նիտրագինը ֆոսֆորի հետ ն, Ախտայի հողային պայմաններում, յիթե վիկայի բերքը կոնտրոլ հողամասի հետ

համեմատած բարձրացնում ե 17,15%՝ ով, Սարուխանում՝ 35,13%՝ ով, ապա միայն նիտրագինը Ն. Ախտայում բերքը բարձրացնում ե 24,71%՝ ով, Սարուխանում 45,27%՝ ով: Ֆոսֆորի նման բացասական ազդեցության բացատրությունը պետք ե փնտոել տըվյալ շրջանների հողերի յուրահատուկ ֆիզիկո-քիմիական կառուցվածքի մեջ:

Նիտրագինը, բացի բերքի քանակի վրա այլպես լավ ազդեցություն թողնելուց, նաև չոր խոտի մեջ յեղած հում պրոտեինյան նյութերի (այսինքն ազոտային սննդանյութերի) քանակի վրա յե մեծ ազդեցություն ունենում:

Քիմիական անալիզները ցույց են տալիս, վոր նիտրագինը բացի բերքն ավելացնելուց, նաև պրոտեինյան նյութերի՝ այդ կարևոր ազոտային սննդանյութերի մեջ բավականին խոր փոփոխություններ ե մտցնում (աևս ներքե բերված աղյուսակը):

Ինչպես աղյուսակի տվյալներից ե յերկում, նիտրագինով պարարտացրած հողամասերի բույսերի մեջ յեղած պրոտեինյան նյութերն ավելի շատ են, քան նիտրագին չստացած հողամասերի բույսերը: Պրոտեինյան նյութերի վրա նույնպես լավ ե ազդում ֆոսֆորն առանձին և ֆոսֆորը նիտրագինի հետ Բայց վորոշ գեալքերում այդ պարարտանյութը պրոտեինյան նյութերը պակասեցնում ե, իսկ վորոշ գեալքերը բույս ել ֆոսֆորը նիտրագինի հետ ավելի լավ արդյունքներ ե տալիս:

Աղյուսակ 2. Պրոտեինյան (սպիտակուցալին) նյութերը չոր խռով մեջ՝ օներով

Ծրջաններ	Կոլաջիններ	Սոլոցիններ	Բյուն
Հոգաններ	Վրձնալու	Վրձնալու	Վրձնալու
Համականելու	Արժանալու	Մուկ- վաճառք	Փորձերի սպիտական
Համականելու	Բաժանու	Թերի- վաճառք	գոյներ
Համականելու	Համականելու	Մուկ- վաճառք	սովորական
Համականելու	Համականելու	Թերի- վաճառք	հոգաններ
Համականելու	Համականելու	Մուկ- վաճառք	ամառապահ
Համականելու	Համականելու	Թերի- վաճառք	ամառապահ
Համականելու	Համականելու	Մուկ- վաճառք	ամառապահ
Համականելու	Համականելու	Թերի- վաճառք	ամառապահ

Վերոհիշյալ տվյալները յեթե ամփոփենք, կարող ենք յեղակացնել, վոր.

1. Նիտրագինը հայաստանի տարբեր հողային ու կլիմայական պայմաններում միշտ ել մեծ եֆեկտ և տալիս, միայն այն տարբերությամբ, վոր տարբեր հողային ու կլիմայական պայմաններում նրա տված արդյունքը տարբեր է:

2. Հայաստանի հողերի մեջ բնականում գտնված պարաբակտերիաները շատ թույլ վիրուլենտություն (վարակելու ունակություն) ունեն Նիտրագինի միջոցով հողին տրված պալարաբակտերիաներն ավելի ակտիվ տեսակներ լինելով թիթեռնածաղկավոր բույսերի արմատների վրա մեծ քանակությամբ և խոշոր պալարաբիկներ են առաջացնում, արդյունքն այն և լինում, վոր վերջինիս շնորհիվ բույսերի աճեցողությունը լավ և ընթանում և բերքն ել բարձր և լինում:

3. Հայաստանի հողային պայմաններում Յերևանի պարաբակտերացման կայանի կողմից մեկուսացված առվույտի պալարաբակտերիաներն ավելի ակտիվ և վիրուլենտ են, քան Մոսկվայից ստացված նիտրագինի պալարաբակտերիաները. զրա համար ել առաջինը բույսերի վրա համեմատարար ավելի լավ ազդեցություն և թողնում, քան յերկրորդը. Թիթեռնածաղկավոր բույսի պալարաբակտերիաներից նիտրագին պատրաստելիս պետք և խոշոր տեղ տալ տեղական թիթեռնածաղկավոր բույսերի վիրուլենտ բակտերիաներին:

4. Նիտրագինը փոփորի հետ պարարտացման ժամանակ՝ հայաստանի բամբակացան և միջին լեռնային լրջաններում առվույտի վրա շատ լավ և ազդում:

Լեռնային լրջաննում վիկայի և առվույտի վրա

Նիտրագինը շատ լավ է ազդում, նա դաշտային և միջին լեռնային շրջանում նույնպես լավ է ազդում առվույտի և կորնգանի վրա, բայց ավելի թույլ, քան ազդում և նա փոսֆորի հետ պարարտացման ժամանակ:

5. Նիտրագինն առանձին և փոսֆորի հետ, բայց թիթեռնածաղկավոր բույսերի բերքը բարձրացնելուց, նաև բավականին ավելացնում և նրանց պրոտեինյան նյութերի քանակը:

Նիտրագինի նման ազդեցությունը հաշվի առնելով՝ Հայկական ԽՍՀ Հողժողովագույքը 1936 թվականին վորոշում ընդունեց, վոր Հայաստանի տարբեր շրջաններում մշակվող թիթեռնածաղկավոր բույսերն անպայման նիտրագինիզագրի յենթարկվեն, հատկապես վիկան, առվույտը և կորնգանը:

Պարարտացման կայանն այդ աշխատանքներին զուղընթաց ձեռնամուխ յեղավ մասսայական փորձեր կազմակերպելու գործին՝ պարզելու համար նիտրագինի տնտեսական եփեկտիվությունը: Այդ աշխատանքներից (աշխատանքները կատարել ե կայանի աշխատակից կ. Արքանամյանը) պարզվում ե, վոր նիտրագինն ամենուրեք լավ արդյունք ե տալիս: Ինչպես տեսնում ենք ներքոհիշյալ աղյուսակից նիտրագինը մեր հիշյալ շրջաններում միշտ ել լավ արդյունք ե տալիս:

Աղյուսակ 3.

Զ Վ	Հրշակներ	Կուտանեալու- թյուններ	Մեկ հետար յենանելություն		Մանու- թիթեռների
			Թիթեռ- նածաղկա- վոր	Լոնտարու	
1	Համամակարգի	Զուրկամալ Համամակար	զիկա զիկա	11,7 100 % 29,25 %	24,0 216,2 % 53,1 181,5 %
2.	Մակարանալանի	Կուտանեալություններ	Կուտանեալություններ	23,4 100 % 31,0 % 25,2 % 27,0 % 13,6 % 46,4 % 49,2 %	26,5 113,2 % 37,0 119,4 % 40,8 161,9 % 35,0 123,6 % 35,4 180,6 % 59,7 128,7 % 60,0 121,9 %

Տ Ա Ն Ո Ւ Թ Ո Ւ Ը		Մ Ի Ջ Ա Ն		Հ Ա Ր Ա Վ Ա Խ Ա Բ Ո Ւ Ը		Մ Ի Ջ Ա Ն	
Տ Ե Ր Ա Խ Ա Բ	Կ Ա Ր Ա Վ Ա Խ Ա Բ	Տ Ե Ր Ա Խ Ա Բ	Կ Ա Ր Ա Վ Ա Խ Ա Բ	Տ Ե Ր Ա Խ Ա Բ	Կ Ա Ր Ա Վ Ա Խ Ա Բ	Տ Ե Ր Ա Խ Ա Բ	Կ Ա Ր Ա Վ Ա Խ Ա Բ
3.	Ա պ ա լ ա ս ե կ 2 5 ٪.	Բ ա շ 2 ա ն ա լ ա ր ա ն		2 5 , 0	1 0 0 0 0	3 5 , 6	1 4 2 , 6 0
4.	Բ ա տ ա լ ո ւ ծ ա լ ի լ	Մ ա ր լ ա ս		3 1 , 3 5	1 0 0 0 0	4 2 , 7	1 3 6 , 2 0
5.	Մ ա լ ա տ ո ւ ն ո ւ .	Ա ս ա լ ա ձ ո ր		2 5 , 0	2	4 2 , 0	1 6 8 , 0 0
6.	Ն . Բ ա յ ա զ ե տ ի	Բ ա տ է լ լ ա ն		3 5 , 2	1 0 0 0 0	4 1 , 6	1 1 8 , 2 0
		հ 2 ա ր ա ց		3 7 , 0	1 0 0 0 0	5 0 , 0	1 1 1 , 1 0
				3 7 , 3	2	4 1 , 3	1 4 7 , 7 0
7.	Ա մ ա ս է լ ա յ ի լ	Գ ա ր լ ո ւ թ ա լ ա մ ա ղ		3 1 , 0 4	1 0 0 0 0	3 5 , 0	1 1 2 , 8 0
		Բ ա կ ր ա		4 7 , 8	2	5 0 , 4	1 0 5 , 4 0
		Ա մ ա ս է լ ա		4 7 , 5	2	5 2 , 0	1 0 9 , 5 0
				2 4 , 0	1 0 0 0 0	3 8 , 0	1 1 8 , 3 0
		Փ ա կ ի ա յ ո ւ ն ի		2 1 , 0	2	8 0 , 0	1 4 2 , 3 0

Այսպես որինակ՝ Համամլույի շրջանի Զիգգամալ գյուղում վիկայի բերքը նիտրագինի ազդեցությունից բարձրանում է 116,2%՝ այսինքն՝ կոնտրոլի հետ համեմատած 13 ցենտներով ավելի։ Համամլույում 81% ավել, Ստեփավանի շրջանի Ագարակ գյուղի կողմանականությունը 61,9% ավելի, Դյուլագարակում՝ 80,6% ավելի, Բասարգեչարի շրջանի Կրղբուլաղում՝ 68,2% ավելի, Ղուկաս Ղուկասյանի շրջանի Թափառութակի կողմանականությունը՝ 58,3% ավելի և այն։

Ինչպես տեսնում ենք, նիտրագինը թիթեռնածաղկավոր բույսերից հետո, այդ դաշտում, հետեւյալ տարիներում վոչ թիթեռնածաղկավոր բույս ցանելու գեպքում, նըրանց բերքը նույնպես բարձրանում է։ Կայանը նիտրագինի այդ կողմի ազդեցությունն ևս հաշվի յետեւ Որինակ՝ ներքեւ բերված տվյալները վերաբերում են վիկայից հետո նույն դաշտում ցանված հացահատիկների բերքին (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Հ Ն Ը	Կոլտնտեսություն	Բույսեր	Բերքը մեկ հեկտարից ցենտներով	
			Լուսորու	Նիտրազին
1.	Համամլու	գարի	12,5	13,0
2.	Պրիվունայա	աշ ցորեն	8,0	10,0
3.	Ագարակ	»	12,0	16,0
4.	Կալինինո	»	14,8	15,4
5.	Շահնազար	»	8,3	12,0
6.	Գյուլագարակ	»	12,24	14,55
7.	Կրղբուլաղ	գարի	15,0	17,0
8.	Բաղրա	»	14,0	15,0
9.	Ապարան	գարնան. ցորեն	4,02	5,0

Ինչպես տեսնում ենք, նիտրազինով վարակված հողամասի վրա ցանված հացահատիկի բերքը 1-5 ցենտներով ավելանում է: Այդ տվյալներից յերեսում ե, վոր աշնանացան ցորեն ցանելու դեպքում նիտրազինն ավելի մեծ եֆեկտ է տալիս, քան գարնանացանի դեպքում:

Վերև հիշված մեր դիտողություններից արդեն պետք է յեզրակացնել, վոր նիտրազինը մեր սոցիալիստական անսանապահության հետագա զարգացման և սոցիալիստական դաշտերի բերքատվության ել ավելի բարձրացման գործում մեծ նշանակություն ու-

նի. այդ տեսակետից ել մեր ամեն մի կոլտնտեսական պետք է լավ իմանա նիտրազինի նշանակությունը և նրա գործածման ձևերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1938 թվականին պարարտացման կայանը պատրաստում է մոտ 17,400 տուփ առվույտի, վիկայի և կորնզանի նիտրազին: Ամեն մի կոլտնտեսություն և խրճիթ-լաբորատորիա ստանալով նիտրազին պրեպարատներ՝ իրենց դաշտերում կարող են կազմել առանձին փորձադաշտեր, նիտրազինի ազդեցությունը տվյալ հողային պայմաններում ստուգելու համար: Դրա համար անհրաժեշտ է կոլտնտեսության դաշտերից ընտրել մի այնպիսի հողակտոր, վորն ունենա միատեղ և կազմություն և մեծ մասսի ներկայացնի: Այդ հողակտորից յերկու հեկտարի չափով վերցնել վորպես փորձադաշտ, մեկ հեկտարի վրա ցանվելիք թիթեռնածղկավոր բույսի սերմերը վարակել համապատասխան նիտրազինով, իսկ մյուս հեկտարում՝ ցանվելիք սերմերը չվարակել:

Դրվելիք փորձերում ինչ գիտողություններ ել վոր կատարվելու յեն, պետք է կատարվեն միաժամանակ և հավասար:

- Փորձադաշտը պետք է ունենա այս ձևը.

Վարակված

Զվարակված

Ուինակ՝ ասենք ջուրը, վարը, հունձը։ Խրճիթ-լա-
բորատորիան կարող ե հետևել այդ յերկու դաշտերի
բույսերի աճին, նրանց ծաղկմանը և այդ բոլորը նը-
շել առանձին տեսքակում։ Քաղի ժամանակ այդ յեր-
կու դաշտերի բերքը հավաքել առանձին, կշռել չոր
վիճակում ու տեսնել նրանց տարբերությունը։

Արդյունքների մասին հայտնել Յերկան՝ հետեւյալ
հասցեյով։ Աբովյան փողոց № 123, քիմիացման և ագ-
րո-հողագիտական կայան։

Նիտրագինի վերաբերյալ բոլոր հարցերով խընդ-
րում ենք դիմել քիմիացման և ագրոհողագիտական
կայանին, վերոհիշյալ հասցեյով։

Խմբագիր՝ Ա. Մատթեոսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ա. Արգարանյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

Գլավիտի լիազոր Դ-3561 Հրատ. 4491

Պատվեր 104. Տիրաժ 2000.

Թուղթ 72×105 Տպագրական մամ.

Մեկ մամուլում 25600 նիշ. Հեղինակային 11|3 մամ.

Հանձնված ե արտադրության 15փետրվարի 1938 թ.

Ստորագրված ե տպագրելու 2 մարտի 1938 թ.

Գինը - 10 կ.

ԳԻՒՅ 10 Կ.

15395

ПАНОСЯН
РОЛЬ НИТРАГИНА
Гиз Арм. ССР Ереван,